# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
## ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

0095, Ք.Երևան, Մ.Բաղրամյան պող., 19

27 հուլիսի 2020թ.

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Միրզոյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 109-րդ, «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 65-րդ և 67-րդ հոդվածներով՝ օրենսդրական նախաձեռնության կարգով Ձեզ ենք ներկայացնում «Սահմանամերձ համայնքների սոցիալական աջակցության մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը:

ՀՀ Ազգային ժողովի աշխատակարգի 25-րդ կետի համաձայն՝ սույն գրությանը կցվում են.

-օրենքի նախագիծը,
-օրենքի նախագծի հիմնավորումը,
-գործող օրենքի փոփոխվող և լրացվող հոդվածների վերաբերյալ տեղեկանքը:

Խնդրում ենք ներկայացված օրենքի նախագիծը սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:

ԱԺ պատգամավորներ՝

Սիսակ Գաբրիելյան

Սիփան Փաշինյան

# ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է ադրբեջանական զինված ուժերի ուղիղ նշանառության տակ գտնվող բնակավայրերի բնակիչների սոցիալական բեռը որոշակի չափով նվազեցնելու ցանկությամբ: Նշված համայնքների բնակիչները գտնվում են կյանքին եւ գույքին սպառնացող մշտական վտանգի ներքո, ինչը էականորեն սահմանափակում է սեփական բարեկացությունը ապահովելու նրանց հնարավորությունը:

2014 թվականի դեկտեմբերի 1-ի «Սահմանամերձ համայնքների սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքը գործող կարգավորմամբ նախատեսում է միայն Ադրբեջանի Հանրապետության տարածքից իրականացված ռազմական կամ ահաբեկչական գործողությունների հետևանքով օթևանի կորստի դեպքում համապատասխան օթևանով ապահովելու պետության պարտականությունը, իսկ սույն նախագիծը նախատեսում է նաև ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին փոխհատուցման տրամադրում նյութական այնպիսի վնասների համար, որոնք չեն հանգեցրել օթևանի կորստի: Փոխհատուցում է նախատեսվում նաև գյուղատնտեսական և/կամ այլ մթերատու կենդանիների կորստի դեպքերում: Նման կարգավորումը նպատակ է հետապնդում, նյութապես աջակցելով սահմանամերձ համայնքների բնակիչներին, օժանդակել նրանց ապրելու իրենց բնակավայրերում՝ վերակառուցելով իրենց տները և պահպանելով առնվազն նախկինում ունեցած ապրուստի միջոցները:

Սույն նախագիծը նաև օրենքի մակարդակով ամրապնդում է սահմանամերձ համայքների 1-12-րդ դասարանների սովորողների՝ մասնակի փոխհատուցմամբ կամ անվճար դասագրքերը ստանալու հնարավորությունը:

Գործող օրենքի 5-րդ և 6-րդ հոդվածների համաձայն՝ սահմանամերձ համայնքներում և դրանց հարակից տարածքներում ականների պայթյունից կամ Ադրբեջանի Հանրապետության տարածքից իրականացված ռազմական կամ ահաբեկչական գործողությունների հետևանքով վիրավորված անձինք հնարավորություն են ստանում միայն պետպատվերի շրջանակներում բուժվելու, իսկ զոհվածների ընտանիքները՝ միայն հուղարկավորության և գերեզմանների բարեկարգման, տապանաքարերի պատրաստման ու տեղադրման ծախսերը հոգալու: Նախագիծը նպատակ ունի սահմանամերձ համայնքներում վերոնշյալ իրադարձությունների հետևանքով առաջին, երկրորդ կամ երրորդ խմբի հաշվանդամություն ձեռք բերած անձանց, ինչպես նաև զոհված քաղաքացիների ընտանիքներին տրամադրել նաև միանվագ գումարային հատուցում՝ ելնելով այն իրողությունից, որ սահմանամերձ համանքներում ապրող յուրաքանչյուր քաղաքացի ինքն էլ զինվոր է, ով ապրում և արարում է սահմանամերձ համայնքում՝ ամեն օր վտանգելով իր կյանքը:

Միաժամանակ նախագծով առաջարկում է 3 տարով երկարացնել գործող օրենքի ժամկետը, ինչն այդ համայնքներում ապրող մեր հայրենակիցներին հնարավորություն կտա մինչև 2024թ հունվարի 1-ը շարունակելու ստանալ փոխհատուցում սպառած բնական գազի, էլեկտրաէներգիայի, ոռոգման ջրի համար, ինչպես նաև ազատվել օրենքով նախատեսված մի շարք պարտադիր վճարներից:

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ
# «ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ
# ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Սահմանամերձ համայնքների սոցիալական աջակցության մասին» 2014 թվականի դեկտեմբերի 1-ի ՀՕ-203-Ն օրենքը (այսուհետ` Օրենք) լրացնել նոր` 2.1. հոդվածով.
«2.1. Սահմանամերձ համայնքներում երկու և ավելի աշակերտ ունեցող ընտանիքներին դպրոցական դասագրքերը տրամադրվում են մասնակի կամ ամբողջական փոխհատուցմամբ: Չափորոշիչներն ու կարգը սահմանում է կառավարությունը:»:

Հոդված 2. Օրենքի 4-րդ հոդվածը լրացնել նոր պարբերությամբ.
«Այն նյութական վնասները, որոնք չեն հանգեցրել սույն հոդվածի առաջին պարբերությամբ նախատեսված օթևանից զրկվելու դեպքերին, ենթակա են փոխհատուցման Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին: Փոխհատուցումն իրականցվում է Կառավարության սահմանած կարգով:»

Հոդված 3. Օրենքը լրացնել նոր` 4.1. հոդվածով.
«Հոդված 4.1. Սահմանամերձ համայնքների` Ադրբեջանի Հանրապետության տարածքից իրականացված ռազմական կամ ահաբեկչական գործողությունների հետևանքով սպանված գյուղատնտեսական և/կամ այլ մթերատու կենդանիների դիմաց տրվում է փոխհատուցում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին: Փոխհատուցումն իրականցվում է Կառավարության սահմանած կարգով:»

Հոդված 4. Օրենքի 5-րդ հոդվածը լրացնել նոր պարբերությամբ.
«Սույն հոդվածի առաջին պարբերությունում նշված անձանց առաջին, երկրորդ կամ երրորդ խմբի հաշմանդամության ձեռք բերելու դեպքում տրամադրվում է նաև միանվագ գումարային հատուցում` համապատասխանաբար 3.000.000, 2.000.000 և 1.000.000 դրամ:»:

Հոդված 5. Օրենքի 6-րդ հոդվածը լրացնել նոր պարբերությամբ.
«Սույն հոդվածի առաջին պարբերությամբ նախատեսված դեպքերում զոհված քաղաքացիների ընտանիքին տրամադրվում է նաև միանվագ գումարային հատուցում` 5.000.000 դրամ:»:

Հոդված 6. Օրենքի 7-րդ հոդվածում «2021» թիվը փոխարինել «2024» թվով:

Հոդված 7.

1.Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով նախատեսված փոխհատուցման կարգը Կառավարությունը սահմանում է օրենքն ուժի մեջ մտնելուց հետո` երկամսյա ժամկետում:

## ՏԵՂԵԿԱՆՔ
## ՓՈՓՈԽՎՈՂ ԵՎ ԼՐԱՑՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ
## ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 2.1.Սահմանամերձ համայնքներում երկու և ավելի աշակերտ ունեցող ընտանիքներին դպրոցական դասագրքերը տրամադրվում են մասնակի կամ ամբողջական փոխհատուցմամբ: Չափորոշիչներն ու կարգը սահմանում է կառավարությունը:

Հոդված 3. Հայաստանի Հանրապետության սահմանամերձ համայնքների վարչական տարածքում գտնվող, մարտական գործողությունների հետևանքով չօգտագործվող և հակառակորդի կողմից հողատարածքների գնդակոծման դեպքեր ունեցող գյուղատնտեսական նշանակության և բնակավայրերի բնակելի կառուցապատման հողատարածքների համար վճարման ենթակա հողի հարկի և այդ հողերի վրա ունեցած անշարժ գույքի գույքահարկի տարեկան գումարը հարկ վճարող ֆիզիկական և իրավաբանական անձանց անունից նրանց փոխարեն համապատասխան համայնքի բյուջե վճարվում է Հայաստանի Հանրապետության տարեկան պետական բյուջեով այդ նպատակի համար նախատեսված գումարներից՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Հոդված 4. Սահմանամերձ համայնքների՝ Ադրբեջանի Հանրապետության տարածքից իրականացված ռազմական կամ ահաբեկչական գործողությունների հետևանքով օթևանից զրկվելու դեպքում բնակիչներին Հայաստանի Հանրապետության կառավարությունը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին մեկամսյա ժամկետում ապահովում է համարժեք օթևանի հնարավորությամբ՝ նույն համայնքի տարածքում:
Այն նյութական վնասները, որոնք չեն հանգեցրել սույն հոդվածի առաջին պարբերությամբ նախատեսված օթևանից զրկվելու դեպքերին, ենթակա են փոխհատուցման Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին: Փոխհատուցումն իրականացվում է Կառավարության սահմանած կարգով:

Հոդված 4.1. Սահմանամերձ համայնքների՝ Ադրբեջանի Հանրապետության տարածքից իրականացված ռազմական կամ ահաբեկչական գործողությունների հետևանքով սպանված գյուղատնտեսական և/կամ այլ մթերատու կենդանիների դիմաց տրվում է փոխհատուցում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին: Փոխհատուցումն իրականացվում է Կառավարության սահմանած կարգով:

Հոդված 5. Սահմանամերձ համայնքներում և դրանց հարակից տարածքներում ականների պայթյունից կամ Ադրբեջանի Հանրապետության տարածքից իրականացված ռազմական կամ ահաբեկչական գործողությունների հետևանքով վիրավորված Հայաստանի Հանրապետության քաղաքացիների բժշկական օգնությունն ու սպասարկումն իրականացվում են պետպատվերի շրջանակներում:
Սույն հոդվածի առաջին պարբերությունում նշված անձանց առաջին, երկրորդ կամ երրորդ խմբի հաշմանդամության ձեռք բերելու դեպքում տրամադրվում է նաև միանվագ գումարային հատուցում՝ համապատասխանաբար 3.000.000, 2.000.000 և 1.000.000 դրամ:

Հոդված 6. Սահմանամերձ համայնքներում և դրանց հարակից տարածքներում ականների պայթյունից կամ Ադրբեջանի Հանրապետության տարածքից իրականացված ռազմական կամ ահաբեկչական գործողությունների հետևանքով զոհված քաղաքացիների

ընտանիքներին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից տրվում է միանվագ օգնություն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և չափով՝ հուղարկավորության և գերեզմանների բարեկարգման, տապանաքարերի պատրաստման ու տեղադրման ծախսերի համար:

Սույն հոդվածի առաջին պարբերությամբ նախատեսված դեպքերումզոհված քաղաքացիների ընտանիքին տրամադրվում է նաև միանվագ գումարային հատուցում՝ 5.000.000 դրամ:

Հոդված 7. Սույն օրենքի 4-6-րդ հոդվածների դրույթները չեն տարածվում մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը ծագած հարաբերությունների վրա:

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2015 թվականի հունվարի 1-ից և գործում է մինչև 2024~~2021~~ թվականի հունվարի 1-ը: